ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՆՄԱՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/70, 20.04.2022թ.

Շտկման ամսաթիվը՝ 21.04.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Արմտեկ» ՍՊԸ և «Այթի էքսպերտիզա» ՍՊԸ կոնսորցիում

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ Ո ԵՄԾՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022

Գնման առարկան՝ հավատարմագրային կառավարման ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել ՀՀ Ո ԵՄԾՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Արմտեկ» ՍՊԸ և «Այթի էքսպերտիզա» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու որոշում:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ ֆինանսների նախարարություն

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ,

պարոն Լևոն Օհանյանին

,,Արմտեկ,, և ,,Այթի Էքսպերտիզա,, ՍՊ ընկերություններից /Կոնսորցիումից/

Ք. Երևան, Աղասու 5

,,Արմտեկ,, ՍՊԸ ՀՎՀՀ 00916773

,,Այթի Էքսպերտիզա,, ՍՊԸ ՀՎՀՀ 00165743

Լիազորված անձ, փաստաբան Արամ Ղլեչյան

Անձնագիր AU 0650489, տրված 17.03.2022թ. 012-ի կողմից

Արտոնագիր 1150

Ք. Երևան, Հալաբյան 65-16

Հեռ. 091 499 118

Էլ. փոստ aramghlechyan@mail.ru

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Ք. Երևան, Նալբանդյան 130

Բ Ո Ղ Ո Ք

ՀՀ ոստիկանության ՀՀ Ո ԵՄՇԶԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ

Հարգելի պարոն Օհանյան,

Ձեզ եմ ներկայացնում ,,Արմտեկ,, և ,,Էյթի Էքսպերտիզա,, ՍՊԸ-ների բողոքը՝ ՀՀ ոստիկանության ՀՀ Ո ԵՄՇԶԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ՝ Ձեր 20.04.2022թ. գրությամբ նշված թերությունները շտկված վիճակում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ բողոքարկման վճարը կատարվել է էլեկտրոնային վճարային եղանակով՝ Կոնվերս բանկի վճարային քարտի միջոցով /որը պատկանում է ,,Այթի էքսպերտիզա,, ՍՊԸ տնօրեն Վարդան Պետրոսյանին/ և Ձեզ է ներկայացվել անկանխիկ գործարքի քաղվածքը:

Բողոքի նախապատմությունը.

ՀՀ ոստիկանության կողմից ՀՀ Ո ԵՄԾՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022 ծածկագրով երկու փուլ մրցույթի նախառակավորման ընթացակարգին մասնակցելու 1. ,,Արմտեկ,, ՍՊ և ,,Այթի էքսպերտիզա,, ՍՊ ընկերությունների կոնսորցիումի, 2. ,,Հիբրիդ Սիսթեմս,, ՍՊ և ՍՕՍ Սիսթեմս,, ՍՊ ընկերությունների կոնսորցիումի, 3. ,,Սմարտ Բիլդինգ,, և ,,ԱԿՀ ԼԱԲ,, ՍՊ ընկերությունների կոնսորցիումի, 4. ,,Էլլիպս Ջիէյ,, ՍՊ ընկերության հայտերը՝ ՀՀ ոստիկանության ՀՀ Ո ԵՄԾՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022 ծածկագրով երկու փուլ մրցույթի նախառակավորման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 08.02.2022թվականին /թիվ 3 արձանագրություն/, ներկայացված փաստաթղթերի և դրանցով հիմնավորվող՝ մասնակիցներին առաջադրվող պայմաններին համապատասխանությունը գնահատվել է բավարար:
,,Էլլիպս Ջիէյ,, ՍՊԸ-ն և ,,Սմարտ Բիլդինգ,, և ,,ԱԿՀ ԼԱԲ,, ՍՊ ընկերությունները/Կոնսորցիումը/, այնուհետև՝ ,,Արմտեկ,, ՍՊ և ,,Այթի էքսպերտիզա,, ՍՊ ընկերությունների կոնսորցիումը, ,,Հիբրիդ Սիսթեմս,, ՍՊ և ՍՕՍ Սիսթեմս,, ՍՊ ընկերությունների կոնսորցիումը ևս ներկայացրել են համանման բողոքներ, որոնք մասնակի բավարարվել են և ՀՀ ոստիկանության ՀՀ Ո ԵՄԾՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022 ծածկագրով երկփուլ մրցույթի գնահատող հանձնաժողովին հանձնարարվել է իրականացնել հայտերի նոր գնահատում՝ բողոքարկմամբ ներկայացված փաստերի ստուգմամբ:

Բողոքի փաստական հիմքերը.

1. ՀՀ Ո ԵՄԾՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022 ծածկագրով երկփուլ մրցույթի գնահատող հանձնաժողովի /այսուհետ՝ նաև Հանձնաժողով/ կողմից 14.04.2022թ. նիստով ընդունված որոշումը չի բխում ,,Գնումների մասին,, ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման դրույթներից, չունի փաստական հիմնավորվածություն, ինչպես նաև չեն պահպանվել միատեսակ մոտեցման և որոշակիության սկզբունքները՝ անտեսվել են մասնակից ընկերության իրավունքները և օրինական շահերը, ընդունված որոշումը հակասում է ձեռք բերված, ընթացակարգի փաստաթղթային ծավալներում առկա փաստական տվյալներին, ոչ օբյեկտիվ է և ակնհայտ կողմնակալ :

Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը, մասնավորապես՝ ,,Այթի էքսպերտիզա,, ՍՊԸ /այսուհետ նաև՝ Ընկերություն/ և ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊԸ միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրով /կատարողական ակտով/ կատարված աշխատանքային փոխծառությունը գնահատվել է անբավարար, քանի որ, ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊԸ-ն իր գրությամբ պարզաբանել է, որ նշված պայմանագրով ծառայություններ չեն մատուցվել և այդ ծառայությունները մատուցվել են ,,Էլլիպս Ջիէյ,, ՍՊԸ-ի կողմից:

Էական է այն փաստը, որ Ընկերության ներկայացուցչի կողմից՝ Հանձնաժողովին գրավոր և բանավոր կարգով պարզաբանվել է, որ ,,Էլլիպս Ջիէյ,, ՍՊ ընկերությունը և ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊ ընկերությունը պատկանում են միևնույն անձանց՝ Ալեքսան և Գուրգեն Զաքարյաններին և այդ տվյալներն առկա են ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊԸ և ,,Էլլիպս Ջիէյ,, ՍՊԸ կառավարման բարձրագույն մարմնի՝ ընդհանուր ժողովի անդամներ են հանդիսանում Ալեքսանդր և Գուրգեն Զաքարյանները, որոնք Երևան քաղաքի քննչական վարչության ԾՀՔ բաժնում քննվող թիվ 58154618 քրեական գործով ներգրավված են որպես մեղադրյալներ՝ ՀՀ քր.օր-ի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ և 325-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքներ կատարելու համար: Տվյալ քրեական գործով ,,Էլլիպս Ջիէյ,, և ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊ ընկերությունների սեփականատերերին և գործադիր մարմնի ղեկավարներին , հաշվապահներին մեղադրանքներ են առաջադրվել այն բանի համար, որ նրանք իրականում չմատուցված ծառայությունները, կեղծ կատարողական ակտերի կազմման միջոցով ներկայացրել են ՀՀ Ո ՃՈ ծառայությանը և պետությունից հափշտակել են մոտ 1 միլիարդ դրամի հասնող ֆինանսական միջոցներ:

Հետագայում՝ 2022թվականի փետրվարի 17-ին ՀՀ ՔԿ Երևան քաղաքի ՔՎ ԾՀՔ բաժնում հարուցվել է նոր քրեական գործ՝ ՀՀ քր.օր-ի 189-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով, հիմք ընդունելով այն փաստը, որ ,,Էլլիպս Ջիէյ,, և ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊ ընկերությունների ղեկավար անձանց կողմից կատարվել են անապրանք գործարքներ և արդյունքում պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափի վնաս /,,Էլլիպս Ջիէյ,, ՍՊԸ-ում կատարված հարկային ստուգմամբ առաջադրվել է մոտ 157 միլիոն ՀՀ դրամի հարկային պարտավորություն, ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊԸ-ին մոտ 495 միլիոն ՀՀ դրամի հարկային պարտավորություն/: Նշված քրեական գործով, ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊԸ-ն ,,Այթի էքսպերտիզա,, ՍՊԸ-ից 2018թ. Օգոստոս-2019թ. Փետրվար ամիսներին, փաստացի ստացված ծառայությունները, 2019թվականի ապրիլ-մայիս ամիսներին կազմված կեղծ կատարողական ակտերով, այդ ծառայությունների մատուցումը վերագրել է ,,Էլլիպս Ջիէյ,, ՍՊԸ-ին և պետությունից կրկին անգամ հափշտակել են առանձնապես խոշոր չափերի գումարներ:

Նշված քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա, նախաքննական մարմինը եզրահանգել է, որ այդ ծառայությունները մատուցվել են

,,Այթի Էքսպերտիզա,, ՍՊԸ-ի կողմից, իսկ՝ ,,Էլլիպս ՋիԷյ,, ՍՊԸ-ին դրանք վերազրելու և դրան դիմած պետությունից գումար վերցնելու երևույթը գնահատել է քրեական օրենսգրքի նորմով արգելված արարքի կատարում՝ ,,Էլլիպս ՋիԷյ,, ՍՊԸ-ի սեփականատեր Ալեքսան Զաքարյանի կողմից, որին օժանդակել է ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Պողոսյանը:

Վերոնշվածը բացարձակ ճշմարտություն է, որի վերաբերյալ Ընկերության ներկայացուցիչը Հանձնաժողովին տվել է անհրաժեշտ տեղեկատվություն:

Սակայն, Հանձնաժողովը, անտեսելով Երևան քաղաքի քննչական վարչության ԾՀՔ բաժնում քննվող թիվ 58154618 քրեական գործով գրությամբ ներկայացված օբյեկտիվ տեղեկատվությունը, դիմել է սույն մրցույթի ելքով շահագրգռված ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊԸ-ի տնօրենին՝ մեղադրյալ Արթուր Պողոսյանին և խնդրել է հայտնել՝ արդյոք ,,Այթի Էքսպերտիզա,, ՍՊԸ-ն պատշաճ կատարել է իր պայմանագրային պարտավորությունը:

,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊԸ-ի տնօրենի՝ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Վարդան Մովսիսյանին հասցեագրած, ակնհայտ կեղծ տեղեկություններով հագեցած գրության հիման վրա, Հանձնաժողովը եզրակացրել է, որ իրեն ներկայացված պայմանագրով ներկայացվող փաստական տվյալները ճիշտ չեն և ,,Այթի Էքսպերտիզա,, ՍՊԸ-ն չի կատարել պայմանագիրը:

Փաստորեն, Հանձնաժողովը ենթադրել է, որ մեղադրյալ Արթուր Պողոսյանը կարող էր իր գրությամբ հայտնել, որ ինքը հանցավոր համաձայության գալով Ալեքսան Զաքարյանի և այլոց հետ, պետությունից հափշտակել է առանձնապես խոշոր չափերի գումարներ, ինչի համար իրեն ևս մեղադրանք է առաջադրվել: Փաստորեն, Հանձնաժողովը չի ընկալել այն պարզ երևույթը, որ փաստացի ,,Այթի Էքսպերտիզա,, ՍՊԸ-ի կողմից կատարած ծառայության /աշխատանքի/ արդյունքները ,,Էլիպս ՋիԷյ,, ՍՊԸ-ին վերազրման արդյունքում՝ մեղադրյալի կարգավիճակ ստացած ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Պողոսյանը չէր կարող հայտնել օբյեկտիվ ճշմարտությունը, այլ պետք է շարունակաբար ստեր՝ իրեն արդարացնելու անկնկալիքով: Փաստորեն, սույն մրցույթի ելքով շահագրգիռ ընկերության տնօրենի գրությամբ ներկայացված հորինվածքը, Հանձնաժողովը գնահատել է որպես օբյեկտիվ տվյալ, իսկ նախաքննական մարմնի՝ իր լիազորությունների ծավալներում կատարած գործողությունները և եզրահանգումները՝ անտեսել է:

Փաստորեն, Հանձնաժողովը անտեսել է բնօրինակ պայմանագիրը, բնօրինակ կատարողական ակտը, նախաքննական մարմնի գրությամբ ներկայացվող փաստական տվյալները՝ որոնք հաստատում են ,,Այթի Էքսպերտիզա,, ՍՊԸ-ի կողմից ծառայությունների մատուցման /պայմանագրի կատարման/ փաստը, հիմք է ընդունել սույն մրցույթի մասնակից ,,Էլլիպս ՋիԷյ,, ՍՊԸ-ի 50 տոկոս բաժնեմասի

սեփականատեր Ալեքսան Զաքարյանին պատկանող՝ ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊ /կրկին 50 տոկոս բաժնեմասով/ ընկերության տնօրենի գրությամբ ներկայացված, որևէ փաստական տվյալով չհիմնավորված, զրպարտչական, մաղձոտ գրությունը և ընդունել է ակնհայտ չհիմնավորված որոշում:

Հանձնաժողովը, հղում կատարելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 67-րդ կետին, եզրակացրել է, որ իր կողմից կատարված հարցմամբ պարզ է դարձել, որ մասնակցի՝ ,,Արմտեկ,, և ,,Այթի Էքսպերտիզա,, ՍՊԸ-ների /կոնսորցիումի/ կողմից ներկայացված պայմանագրերը և կատարողական ակտերը չեն համապատասխանում իրականությանը, մասնավորապես պայմանագրով ստանձնած պարտավորությունները չեն կատարվել:

Բողոքի իրավական հիմքերը.

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 67-րդ կետի համաձայն՝ Գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:
ՀՀ կառավարության կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտի ուժով՝ Հանձնաժողովին տրվել էր լիազորություն՝ ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը:

Հանձնաժողովը ակնհայտորեն խախտել է հիշյալ որոշմամբ իրեն վերապահված լիազորությունը և պաշտոնական աղբյուրից ստացված /ՀՀ քննչական կոմիտեի, Երևան քաղաքի քննչական վարչության ԾՀՔ բաժնի ՀԿԳ ավագ քննիչի գրությամբ ներկայացված/ տեղեկատվությանը հակասող, մասնավոր անձ՝ ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊԸ-ի տնօրենի գրությունը հիմք է ընդունել, թեև ակնհայտ է, որ մասնակցի կողմից ներկայացված տեղեկատվության հավաստիության ստուգման համար՝ ՀՀ կառավարությունը լիազորել է օգտվել պաշտոնական աղբյուրներից:

Հանձնաժողովի համար ակնհայտ էր, ,,Սեյուրիթի Դրիմ,, ՍՊԸ-ից ստացված տեղեկատվությունը չի հանդիսանում ՀՀ կառավարության 526-Ն որոշման 67-րդ կետի

դրույթով նախատեսված՝ պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին իրավասու մարմինների գրավոր եզրակացության չափորաշիչներին:

Հանձնաժողովին, ներկայացվել է այն փաստը, որ բողոքարկվող ընթացակարգի մասնակից ,,Էլլիպս Ջիէյ,, ՍՊԸ-ն և ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊԸ-ն ունեն միևնույն բարձրագույն կառավարման մարմինը՝ Գուրգեն Զաքարյանը 50 տոկոս, Ալեքսան Զաքարյան 50 տոկոս և այդ անձանց պատկանում են այդ երկու ընկերությունների 100 տոկոս բաժնեմասերը:

Հանձնաժողովին գրավոր կարգով /սույն ընթացակարգով նախկինում քննված բողոքի շրջանակներում/ պարզաբանվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի վարույթում քննվում է թիվ 58154618 քրեական գործը, որով Գուրգեն և Ալեքսան Զաքարյանները, ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Պողոսյանը, ներգրավված են որպես մեղադրյալներ և նրանց մեղսագրվում են ՀՀ քր. օր-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքների կատարում:

Հանձաժողովին պարզաբանվել է, որ մեղադրանքի էությունը կայանում է նրանում, որ տարբեր ժամանակահատվածներում՝ 2017թվականի փետրվարի 15-ից մինչև 2019թ. փետրվար ամիսը, ,,Էլլիպս Ջիէյ,, և ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊԸ-ի սեփականատերերը և գործադիր մարմնի ղեկավարները փաստացի չմատուցած ծառայությունները վերագրելով ,,Էլլիպս Ջիէյ,, ՍՊԸ-ին, փաստաթղթերի կեղծումով, խարդախությամբ պետությունից հափշտակել են մոտ մեկ միլիարդ ՀՀ դրամ:

Նույն քրեական գործով, 2018թվականի օգոստոս-2019թ. Փետրվար ամիսներին ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի շրջանակներում, փաստացի ծառայություն է մատուցվել ,,Այթի Էքսպերտիզա,, ՍՊԸ-ի կողմից, սակայն 2019թվականի ապրիլ ամսին կազմված կեղծ կատարողական ակտերով, այդ ծառայությունների մատուցումը ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Պողոսյանը վերագրել է ,,Էլլիպս Ջիէյ,, ՍՊԸ-ին և պետությունից կրկին անգամ հափշտակվել են առանձնապես խոշոր չափի գումարներ:

Նշված քրեական գործով Արթուր Պողոսյանը ներգրավված է որպես մեղադրյալ, իսկ Հանձնաժողովը, փաստորեն մեղադրյալ Արթուր Պողոսյանը գրությունը նույնացրել է ՀՀ կառավարության 525-Ն որոշման 67-րդ կետով սահմանված պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալների կամ դրա մասին իրավասու մարմինների գրավոր եզրակացության չափորաշիչների հետ, թեև այդ նույն քրեական գործը քննող պետական լիազոր մարմնի գրության օրինակը ներկայացված էր հանձնաժողովին և այդ գրությամբ հերքվում էր ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊԸ-ի կողմից տրամադրվող տեղեկատվությունը:

Ավելին, նախաքննական մարմինը հաստատում է, որ Հանձնաժողովին ներկայացված պայմանագրի և կատարողական ակտին համապատասխանող ծառայությունները մատուցվել են ,,Էյթի Էքսպերտիզա,, ՍՊԸ-ի կողմից և այդ ծառայությունների դիմաց ամեն ամիս ,,Այթի Էսպերտիզա,, ՍՊԸ-ին վճարվել են պայմանագրային գումարները:

Հիշյալ պայմանագիրը և կատարողական ակտը կեղծ լինելու վերաբերյալ, նախաքննությամբ տվյալներ ձեռք չեն բերվել:

Այս տեղեկատվությունը հանդիսանում է պաշտոնական աղբյուրից ձեռք բերված և մասնակից ,,Այթի Էքսպերտիզա,, ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից, ներկայացվել է Հանձնաժողովին:

Հանձնաժողովը անտեսել է նաև այն փաստը, որ պայմանագրի վավեր լինելու, կեղծ լինել-չլինելու, պայմանագրային պարտավորությունները կատարված լինելու և ընդհանուր մեկ բառով՝ պայմանագրային վեճը լուծելու իրավասությունը պատկանում է բացառապես ՀՀ դատարաններին, իսկ որևէ դատական ակտ, որով հաստատվում է ,,Այթի Էքսպերտիզա,, ՍՊԸ-ի կողմից իր պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը /ի հակասություն կատարողական ակտով արձանագրված փաստական տվյալի/ առկա չէ:

Փաստորեն, Հանձնաժողովը իր պաշտոնական լիազորությունների կատարումը իրացրել է հիմք ընդունելով մասնակից ընկերության ցանկություն-ենթադրությունները կամ ավելի ստույգ հանցագործություն կատարած անձանց կեղծ տվյալները:

Հատկանշական է այն, որ ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրպարտչական գրությամբ հիշատակվում է այդ նույն **թիվ 58154618 քրեական գործը՝ իրենց յուրատեսակ, ստահող մեկնաբանություններով և որևէ պարագայում՝ ՀԿԳ քննիչի պաշտոնական գրությամբ տրամադրված տեղեկատվության և ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊԸ-ի գրությամբ ներկայացվածի բովանդակային, էական հակասությունները չեն մտահոգել Հանձաժողովին և դրանց ակնհայտ հակասությունների պարագայում ևս՝ ,,առավելություն է,, տրվել ,,Սեքյուրիթի Դրիմ,, ՍՊԸ-ի տեղեկատվությանը:**

2. ,,Գնումների մասին,, ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներին համապատասխան՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Հանձնաժողովին, հասու են եղել կողմերի ներկայացրած միջնորդությունները, որոնք ներկայացվել են բողոքը քննած անձին, որը վերջինս չի քննարկել այն պատճառով, որ դրանց քննարկումը և լուծումը հանձնարարել է Հանձնաժողովին:
Հիշյալ գրավոր միջնորդությամբ, Հանձնաժողովին ներկայացվել է այն փաստը, որ ՀՀ ՔԿ Երևան քաղաքի ՔՎ ԾՀՔ բաժնում 2022թվականի փետրված ամսին հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քր.օր-ի 189-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով և ներկայացվել է զանգվածային լրատվամիջոցով կատարված հրապարակումը՝ որի համար հիմք է հանդիսացել ՀՀ ՔԿ պաշտոնական հաղորդագրությունը:
Հանձնաժողովի կազմում ներգրավված են իրավաբանական վարչության աշխատակիցներ, որոնց մասնագիտական գիտելիքները թույլ են տալիս եզրահանգել, որ ՀՀ քր. Օր-ի 189-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներ պարունակում են այն արարքները, որոնք կատարվել են հարկային իրավահարաբերություններում:
Հանձնաժողովը, կարող էր և պարտավոր էր պարզել ,,Էլլիպս Ջիէյ,, ՍՊԸ-ի մասնակցությունը գնման ընթացակարգին բացառող փաստական տվյալը, որի մասին Ընկերության ներկայացուցիչը կատարել է ուղղակի մատնանշում՝ քրեական գործը հարուցվել է հարկային ստուգմամբ պարզված՝ ,,Էլլիպս Ջիէյ,, ՍՊԸ-ն առաջադրված հարկային պարտավորության հիմքով: Փաստորեն, Հանձնաժողովը, ունենալով բավարար փաստական տվյալներ /ՔԿ պաշտոնական հաղորդագրությունը՝ հրապարակված ՋԼՄ-ով/, չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ պարզելու օրենքի նորմի ուժով՝ ,,Էլլիպս Ջիէյ,, ՍՊԸ-ի մասնակցությունը գնման ընթացակարգին բացառող փաստական հանգամանքը, որը պարզելուն ուղղված կատարվել էր Ընկերության միջնորդությունը, թույլ է տվել, որ գնման ընթացակարգին մասնակցի մի սուբյեկտ, որի մասնակցությունն օրենքով արգելված է:
Հանձնաժողովի կողմից թույլ տված պաշտոնական անփութության փաստերի գնահատականը կտա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն, իսկ սույն բողոքի քննության ծավալներում հատկանշական է այն փաստը, որ օրենքով նախատեսված՝ գնման ընթացակարգին մասնակցության արգելքի վերաբերյալ փաստական տվյալին տիրապետող՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությանը դիմելու իր պարտավորությունը Հանձնաժողովը չի կատարել, թեև կարող էր և պարտավոր էր ենթադրել, որ ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչությունը չէր հարուցի քրեական գործ և Ալեքսան Զաքարյանին մեղադրյալ չէր ներգրավի, /դատավարական հսկողություն իրականացնող դատախազը ևս չէր թույլատրի/ եթե չլիներ դրա փաստական և իրավական հիմքը, իսկ այդպիսի փաստական և իրավական հիմքերի առկայության, ինչպես նաև քրեական գործի առկայության մասին հավաստող բավարար տվյալներ, Ընկերության ներկայացուցչի կողմից, ներկայացվել են Հանձնաժողովին:
Հանձնաժողովի, ոչ իրավաչափ անգործության արդյունքում, գնման ընթացակարգին շարունակում է մասնակցել ,,Էլլիպս Ջիէյ,, ՍՊԸ-ն, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է մոտ 157 միլիոն ՀՀ դրամի չկատարված հարկային պարտավորություն:
Ելնելով վերոգրյալից

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ

1. Սույն բողոքն ընդունել վարույթ:
2. ՀՀ Ո ԵՄՕՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022 ծածկագրով երկփուլ մրցույթի գնահատող հանձնաժողովի պարտավորեցնել ընդունել՝ ,,Այթի էքսպերտիզա,, ՍՊ և ,,Արմտեկ,, ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելու որոշում:

Կից ներկայացվում են՝

1. ՀՀ ոստիկանության ՀՀ Ո ԵՄՕՁԲ-46-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2022 ծածկագրով երկփուլ մրցույթի գնահատող հանձնաժողովի 14.04.2022թ. թիվ 7 արձանագրության պատճենը 4 թերթ,
2. ,,Այթի էքսպերտիզա,, ՍՊԸ-ին տրված իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի լուսապատճենը 1 թերթ,
3. ,,Արմտեկ,, ՍՊԸ-ի տրված իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի լուսապատճենը 1 թերթ,
4. ՀՀ ՔԿ Երևան քաղաքի ԾՀՔ ՀԿԳ քննիչի թիվ 40/26կգ-5956-22 գրության պատճենը 2 թերթ,
5. Բողոքը ներկայացնող, լիազորված անձի անձնագրի լուսապատճենը 1 թերթ,
6. լիազորագիր 1 թերթ,
7. Բողոքարման վճարը կատարված լինելու վերաբերյալ ապացույց /էլ. վճարային քաղվածք/ 1 թերթ:

Բողոքաբերներ՝

,,Այթի էքսպերտիզա,, ՍՊ ,,Արմտեկ,, ՍՊ ընկերությունների /կոնսորցիումի/

կողմից լիազորված անձ, փաստաբան

Ա. Ղլեչյան

21.04.2022թ.